Հայտարարություն

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԾՐԱԳԻՐ
Դրամաշնորհ No. TF016980

ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկը հայտնում է, որ Համաշխարհային բանկի «Հայաստանում Երիտասարդների ներգրավվածության խթանման» դրամաշնորհային ծրագրի /ԵՆԽԾ/ շրջանակում **«Ծրագրի ադմինիստրատիվ օգնականի»** հանձնարարականի իրականացման համար խորհրդատու ընտրելու նպատակով հայտարարվում է անհատ խորհրդատուի ընտրության մրցույթ:

Ընտրված Ծրագրի ադմինիստրատիվ օգնականը պետք է անհրաժեշտ կազմակերպական եւ ադմինիստրատիվ օժանդակություն տրամադրի Ծրագրի համակարգողին եւ Ծրագրի Համակարգման Գրասենյակի /ԾՀԳ/ խորհրդատուներին:

Խորհրդատուն պետք է իրականացնի հետեւյալ առաջադրանքները՝

- ծրագրի շրջանակում կազմակերպատեխնիկական աջակցություն տրամադրի Ծրագրի համակարգողին եւ ԵՆԽԾ խորհրդատու-մասնագետներին,
- իրականացնի ԾՀԳ-ի գործավարական աշխատանքները, վարի ընթացիկ գրագրություն, ելից եւ մտից փաստաթղթերի շարժը, պատրաստի փաստաթղթերի նախագծեր, իրականացնի հայերեն եւ անգլերեն փաստաթղթերի խմբագրում, ապահովի ելից փաստաթղթերի փոխանցումը, վարի ընթացիկ գրագրության եւ թարգմանչական աշխատանքներ,
- պատասխանի հեռախոսազանգերին եւ այցելուներին, ապահովի ԾՀԳ-ի անունից ուղարկվող ելից նամակների պատրաստումն ու առաքումը, պատասխանի կամ վերահասցեագրի ԵՆԽԾ-ի աշխատանքային գործընթացներին առնչվող հարցումները,
- հայթայթի ծրագրի կառավարման ու վերահսկման համար անհրաժեշտ տեղեկատվություն եւ նյութեր,
- իրականացնի հայերեն եւ անգլերեն փաստաթղթերի համակարգչային մուտքագրում, ձեւավորում, սրբագրում, պատճենահանում, տեղակայում համապատասխան թղթապանակներում,
- իրականացնի ԵՆԽԾ-ի շրջանակներում իրականացվող կազմակերպակառավարչական բնույթի հանդիպումների, մասնագիտական քննարկումների, սեմինարների, համաժողովների կազմակերպական աշխատանքների տեխնիկական համակարգումը,
- ԵՆԽԾ-ի շրջանակներում պատասխանատու այցելուներին ցուցաբերի կազմակերպական եւ տեղեկատվական օժանդակություն, կազմի եւ համակարգի այցելողների ժամանակացույցը, վերահսկի ժամանակացույցի փոփոխությունները, կազմակերպի հանդիպումներ, այցելություններ, աշխատանքային ճաշկերույթներ,
- հսկի եւ համակարգի ծրագրին առնչվող տեղեկատվության փոխանակումը եւ կապող օղակ հանդիսանա ծրագրի բոլոր մասնակիցների միջեւ, աջակցի Համաշխարհային բանկի համար Ծրագրի առաջընթացային զեկույցների պատրաստմանը,
- կատարի Ծրագրի համակարգողի՝ իր մասնագիտական պատասխանատվության հարցերին առնչվող այլ հանձնարարությունները:

Ծառայությունները նախատեսվում է իրականացնել 2015թ. հունիսից-2016թ. մարտ ամիսների ընթացքում:

Խորհրդատուն պետք է բավարարի հետեւյալ որակավորման չափանիշներին եւ պետք է ունենա՝

- բակալավրի աստիճան,
- գործավարի, ղեկավարի օգնականի կամ նմանատիպ պաշտոնում առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ (միջազգային ծրագրերում աշխատանքային փորձը կդիտվի որպես առավելություն),
- կազմակերպչական եւ մարդկանց հետ հաղորդակցվելու գերազանց հմտություններ,
- հայերենի եւ անգլերենի սահուն իմացություն,
- համակարգչային տեխնիկայից օգտվելու գերազանց հմտություններ, այդ թվում MS office, եւ տվյալների բազայի հետ կապված ծրագրերի
- գործավարական լավ ունակություններ:

Մեծապես խրախուսվում է որակավորված երիտասարդ դիմորդների (30 տարեկան եւ ցածր) մասնակցությունը:

Վերը շարադրված պահանջներին համապատասխանող անհատ խորհրդատուները կարող են մինչեւ **2015թ. հունիսի 9-ը** ներկայացնել հետաքրքրվածության գրություն եւ կենսագրական թերթիկ ստորեւ նշված հասցեով՝ նշելով ծրագրի անվանումը եւ այն պաշտոնը, որին դիմում եք:

Հետաքրքրվածության հայտերը կարող են ներկայացվել նաեւ էլեկտրոնային փոստով:

ՀՀ Ֆինանսների նախարարության
<< Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն >> պետական
հիմնարկի գործադիր տնօրեն՝ Էդգար Ավետյանին
Երեւան 0010, Տիգրան Մեծի պողոտա 4, 3-րդ հարկ
Հեռախոս. (037411) 910 581, 910 590
Էլ. փոստ. info@ffpmc.am